# Կանաչ կլիմայի հիմնադրամ (ԿԿՀ) Կանաչ տնտեսության ֆինանսավորման տարածաշրջանային ծրագիր (ԿՏՖԾ) – ԿՏՖԾ Հայաստան II – «Կոնվերս Բանկ»

Երկիրը՝
Հայաստան

Ծրագրի համարը՝
55804

Բիզնես ոլորտը՝
Ֆինանսական հաստատություն

Պետական/մասնավոր՝
Մասնավոր

Բնապահպանական կատեգորիա՝
Ֆինանսական հաստատություն (ՖՀ)

Հաստատման ամսաթիվ՝
5 նոյեմբերի 2024թ.

Կարգավիճակը՝
**Հաստատված է**

Ծրագրի ամփոփ փաստաթղթի
անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվը՝
10 դեկտեմբերի 2024թ.

*Տեղեկատվության հասանելիության մասին դիրեկտիվի 1.4.2 (iii) բաժնի համաձայն՝ «Բանկի ղեկավարության կողմից հաստատված ծրագրերի համար, որոնց հետ կապված Տնօրենների խորհուրդը պատվիրակել է հաստատման լիազորությունը, Ծրագրի ամփոփ փաստաթուղթը պետք է բացահայտվի «առարկություններ չկան» համապատասխան ծանուցման ժամկետի սկզբում Բանկի անդամ հանդիսացող երկրին՝ համաձայն ՎԶԵԲ-ի հիմնադրման մասին համաձայնագրի 13-րդ հոդվածի (iii) կետի:»*

## Ծրագրի նկարագրությունը

Մինչև 3 միլիոն ԱՄՆ դոլարի չափով առաջնային վարկի տրամադրում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին (ԿԲ), որից մինչև 2.25 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարը կտրամադրվի Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), իսկ մինչև 0.75 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարը՝ Կանաչ կլիմայի հիմնադրամի

(ԿԿՀ) կողմից ԿԿՀ-Կանաչ տնտեսության ֆինանսավորման տարածաշրջանային ծրագրի (ԿՏՖԾ) շրջանակում:

## Ծրագրի նպատակները

Վարկային միջոցները կօգտագործվեն տեղական մասնավոր հատվածի առևտրային ենթավարկառուների կողմից կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման և հարմարվողականության տեխնոլոգիաներում կատարվող ներդրումները ֆինանսավորելու համար՝ հաշվի առնելով գենդերային գործոնը՝ Հայաստանում ԿՏՖԾ-ի ստանդարտների և հաշվետվողականության պահանջների համաձայն: Վարկային միջոցների 100%-ը կուղղվի Կանաչ տնտեսությանն անցման հետ կապված ներդրումներին: Բացի երկարաժամկետ ֆինանսավորումից, պահանջներին համապատասխանող ենթավարկառուները կստանան ներդրումային խթաններ՝ իրենց ներդրումային ծրագրերի հաջող ավարտից հետո: Տեխնիկական աջակցության (ՏԱ) շրջանակում ծրագրի խորհրդատուները ԿԲ-ին կտրամադրեն դասընթացներ, կաջակցեն կարողությունների զարգացմանը և ծրագրի իրականացմանը: Ծրագրի շրջանակում միջոցները կարող են օգտագործվել արևային էներգիայի հետ կապված ենթածրագրերի համար: Այդ ենթածրագրերը կկառավարվեն համաձայն «Արևային էներգիայի մատակարարման շղթայի ռիսկերի կառավարման առաջարկվող մոտեցման» (CS/FO/21-35), (CS/FO/21-35 (Լրացում 2)) և այդ մոտեցման շրջանակում մշակված ցանկացած հետագա ուղեցույցների:

## Ազդեցությունն անցումային գործընթացի վրա

Անցումային գործընթացի վրա ակնկալվող ազդեցության (ETI) ցուցանիշ՝ 75

Ծրագիրը նպաստում է Կանաչ տնտեսությանն անցման գործընթացի որակի ապահովմանը՝ տրամադրելով ֆինանսավորում և նոու-հաու ֆինանսական միջնորդներին, որոնք ֆինանսավորում են կլիմայի փոփոխության հետևանքների արդյունավետ մեղմման և հարմարվողականության տեխնոլոգիաներում և լուծումներում մասնավոր հատվածի ներդրումները: Դա կնպաստի Հայաստանի անցմանն էկոլոգիապես կայուն, ցածր ածխածնային և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայուն տնտեսության:

## Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն առևտրային բանկ է, որը ծառայություններ է մատուցում ֆիզիկական և իրավաբանական անձանց Հայաստանում: Հայաստանի 18 բանկերի շարքում այն զբաղեցնում է 6-րդ տեղը իր ընդհանուր ակտիվներով և 7-րդ տեղը՝ վարկային պորտֆելով՝ համապատասխանաբար 5.5% և 5.4% շուկայի մասնաբաժիններով 2023թ. վերջի դրությամբ:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

2,250,000.00 ԱՄՆ դոլար

## Ծրագրի ընդհանուր արժեքը

3,000,000.00 ԱՄՆ դոլար

## Հավելյալություն

- **Ֆինանսավորման կառուցվածքը.** ՎԶԵԲ-ն առաջարկում է շուկայում առաջարկվող միջինից ավելի երկար **ժամկետով** ֆինանսավորում, որն անհրաժեշտ է ծրագրի իրականացման համար:

- **Ֆինանսավորման նորարարական կառուցվածքներ և/կամ գործիքներ.** ՎԶԵԲ-ն առաջարկում է նորարարական կանաչ ֆինանսավորման գործիք, որը ֆինանսավորման կառուցվածքում ինտեգրում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են կլիմայական և բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) ստանդարտները և/կամ կլիմայական և ԲՍԿ ռիսկերը: Օրինակ՝ վարկի տոկոսը և/կամ արտոնյալ պայմանները ճշգրտվում են՝ կլիմայական ռիսկի մակարդակը և/կամ կլիմայի փոփոխության դրական ազդեցությունը (օրինակ՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը և կլիմայի փոփոխությանը դիմակայության բարձրացումը) արտացոլելու համար:

- **Ստանդարտների սահմանում.** ԿԲ-ն կօգտվի ՎԶԵԲ-ի մասնագիտական գիտելիքներից ավելի մեծ ներառականությանը և գենդերային ստանդարտների և/կամ հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված գործողությունների պլանների ոլորտում:

- **Գենդերային առումով SMART.** կանայք անհամաչափորեն ավելի շատ խոչընդոտների են հանդիպում կանաչ ֆինանսավորման հասանելիության հետ կապված Հայաստանում: Այդ գենդերային անհավասարությունը վերացնելու համար ԿԲ-ն կկարողանա օգտվել ՎԶԵԲ-ի մասնագիտական գիտելիքներից ապահովելու համար ԿՏՖԾ շրջանակում՝ կանաչ տեխնոլոգիաներ ներդնելու համար տրամադրվող ֆինանսավորումից օգտվելու կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունները և, ի վերջո, կօգնի կին և տղամարդ ենթավարկառուներին բարձրացնել իրենց դիմակայունությունը կլիմայի փոփոխությանը:

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է ՖՀ (FI) կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ), 2019թ.): ԿԲ-ն ՎԶԵԲ-ի գործող հաճախորդ է և առկա վարկային պարտավորությունների շրջանակում գործում է բնապահպանական և սոցիալական (ԲՍ) պահանջներին համապատասխան: ԿԲ-ն պետք է ապահովի բնապահպանական և սոցիալական հարցերի կառավարման համակարգ՝ իր կողմից ֆինանսավորվող ենթածրագրերի հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերը և ազդեցությունը գնահատելու, կառավարելու և մշտադիտարկելու համար: ԿԲ-ից պահանջվում է շարունակել համապատասխանել ՎԶԵԲ-ի Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին (ԳՊ-ներ) և շարունակել կիրառել ՎԶԵԲ-ի ԲՍ ռիսկերի կառավարման համապատասխան ուղեցույցը, այդ թվում՝ ՎԶԵԲ-ի ԲՍ բացառման և ուղղորդիչ ցանկը, և Բանկին ներկայացնել տարեկան բնապահպանական և սոցիալական հաշվետվություններ: ԿԲ-ի վարկի միջոցով ֆինանսավորվող ենթավարկառուներից կպահանջվի համապատասխանել շրջակա միջավայրի պահպանության, առողջության, անվտանգության և աշխատանքի պաշտպանության ազգային պահանջներին:

## Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհային ֆինանսավորում

Գործառնությանը կտրամադրվի ԿԿՀ-ի և Կլիմայական ներդրումների հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ՏԱ-ն: ՏԱ-ի նպատակն է աջակցել Հայաստանի ֆինանսական միջնորդներին, այդ թվում՝ ԿԲ-ին, կարողությունների զարգացման, շուկայավարման, ծրագրի գնահատման և ընդհանուր մշտադիտարկման և հաշվետվողականության հետ կապված հարցերում: Բացի այդ, Վերականգնվող Էներգետիկայի ընդլայնման ծրագրի կողմից ԿԲ-ի հաճախորդներին կտրամադրվեն ներդրումային խթաններ՝ մինչև 300,000 ԱՄՆ դոլարի չափով՝ նպատակ ունենալով խթանել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը և հարմարվողականությանն ուղղված ծրագրերը, որոնք ունեն նշանակալի դրական արտաքին ազդեցություն, և խրախուսել սկսնակ գործարարներին կիրառել նորարարական տեխնոլոգիաներ կրիտիկական զանգված ստանալու համար:

## Ընկերության կոնտակտային տվյալները

Լուսինե Բալանյան
lusine.balanyan@conversebank.am
+374 10 511 211 ներքին 2335
https://www.conversebank.am
ՀՀ, Երևան 0010, 26/1 Վ. Սարգսյան փող.

## Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

# Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ:

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

# Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

# Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից

խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում: